

Ծանոթագրություն 1 «Իրավական դաշտ»

«Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ-ն հիմնադրվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված 2006 թվականի հունիսի 04-ի N14 լիցենզիայի հիման վրա: Ընկերության իրավաբանական հասցեն է ք.Երևան, Խանջյան 41, 3-4, որը նաև համարվում է գործունեության իրականացման հասցե:

Ընկերության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից («ՀՀ ԿԲ»):

2010 թ թվականի հունիսի 30-ի դրությամբ ունեցել է 26 աշխատակից, որից 3-ը սպասարկող անձնակազմ:

Ընկերության խորհրդի որոշման համաձայն Ընկերությունը 2009 թվականին ձեռք է բերել «Իկսոլ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%: Դուսր ընկերությունը իրականացնում է ներդրումային գործունեություն: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են «Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվություններին:

Բաժնետեր

Ընկերության միակ բաժնետերը Ռիգայում (Լատվիա) հիմնադրված «Նորվիկ Բանկ» ԲԸ-ն է: Ֆինանսական միջոցների մեծ մասն Ընկերությունը ստանում է բաժնետիրոջից: Արդյունքում Ընկերությունը տնտեսապես կախման մեջ է Բաժնետիրոջից: Բաժնետերերը արտահայտել են իրենց մտադրությունը Ընկերությանը տրամադրել հետագա անհրաժեշտ աջակցությունը, որպեսզի այն իրականացնի իր գործունեությունը սահմանված կարգով: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում

Ծանոթագրություն 2 «Հաշվապահական ստանդարտներ»

Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող ակտերի և ՀՀՄՍ-երի համաձայն:

Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Ղեկավարությունը որպես Ընկերության ֆունկցիոնալ արժույթ է սահմանել դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Մույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար դրամը հանդիսանում է նաև ներկայացման արժույթ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Անընդհատություն

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որն ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող ակտերի համաձայն պատրաստելու համար՝ ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված առաջացած զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է արժեզրկման գծով պահուստներին վերաբերող ծանոթագրություն 10-ում:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով ներկայացված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2010թ. հունիսի 30-ի դրությամբ պաշտոնական փոխարժեքը կազմում էր 367.5 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և բանկերում գտնվող հաշիվները:

Ֆինանսական գործիքներ

Ընկերության կողմից պահվող միակ ֆինանսական գործիքները տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերն են:

Տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ, նրանց, որոնց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կամ

նրանց, որոնց տիրապետողը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարումնակության անկումից տարբեր այլ պատճառներով:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են ըստ վերջնահաշվարկի ամսաթվի մեթոդի:

Չափում

Ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռք բերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով:

Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրացել է կամ, երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Ընկերությունը որոշ ակտիվներ ապաճանաչում է նաև այն դեպքում, երբ դուրս է գրում անհավաքագրելի ճանաչված ակտիվներին վերաբերող մնացորդները:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Մեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայություն ունեցող հիմնական բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված հիմնական միջոցները ներկայացված են իրական

արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Գործառնական վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանը չեն փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, ծախսագրվում է:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման հաջորդ ամսից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Սարքավորումներ	3-ից 5 տարի
Գույք	7-ից 20 տարի
Փոխադրամիջոցներ	7 տարի
Այլ հիմնական միջոցներ	5 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիան հաշվառվում է կիրառելով գծային մեթոդը վերջիններիս օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	10 տարի
-----------------------	---------

Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը և բանկերում տեղաբաշխված միջոցները («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերն արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (դեպքերը) ազդեցություն ունի վարկի կամ դեբիտորական պարտքի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնց հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Նախևառաջ Ընկերությունը գնահատում է, արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են և առանձին կամ միասին վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար, լինի այն զգալի թե ոչ, ապա այն այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և միասին գնահատում է արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման ուսումնասիրություն և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, ներառված չեն արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախնական վնասը, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառու ֆինանսական դժվարություններ ունի և Ընկերության տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարն Ընկերությունը գնահատում է ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է այլ ոչ ֆինանսական ակտիվները՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերի և օգտագործման արժեքի առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող միավորները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը ցածր է այն հաշվեկշռային արժեքից, որը որոշված կլինեք, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինեք:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են, զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը, օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտականությանը բնորոշ ռիսկերը:

Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը ստանձնում է վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային գծեր և երաշխիքներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են Ընկերության կողմից որոշակի վճարումների կատարումը պարտավորեցնող պայմանագրեր, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն, և այդ վնասը հնարավոր է արժանահավատորել չափել:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրության պահանջներով:

Մովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում՝ հայտարարվելու ժամանակաշրջանում:

Հարկում

Շահույթի կամ վնասի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարբերիչ, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունները: Ժամանակավոր տարբերություններ չեն սահմանվում հաշվապահական հաշվառման կամ հարկվող շահույթի վրա ազդեցություն չունեցող ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Աշխատակիցների հատուցումներ

Ընկերությունը հատկացումներ է կատարում Հայաստանի կենսաթոշակային հիմնադրամին հօգուտ իր աշխատակիցների: Այդ հատկացումները ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

Եկամուտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսերը ճանաչվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես: Տոկոսային եկամուտը և ծախսերը ներառում են զեղչի կամ

հավելավճարի կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ենթակա գումարի միջև տարբերությունների ամորտիզացիան:

Վարկի տրամադրման ու սպասարկման ծախսերը, ինչպես նաև այլ ծախսերը, որոնք համարվում են վարկի ընդհանուր եկամտաբերության անբաժանելի մասը, ուղղակի ծախսերի հետ մեկտեղ հանդիսանում են հետաձգված ծախսեր և ամորտիզացվում են մինչև տոկոսային եկամուտը՝ ֆինանսական գործիքի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ վարձավճարներից և կոմիսիոն վճարներից ստացված եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

Ծանոթագրություն 1 «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
Տոկոսային եկամուտ տրամադրված վարկերից	360,357	698,943	781,638	1,426,253
Տոկոսային եկամուտ տրամադրված երաշխիքներից	-	16,581	1,779	27,809
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվներից և ավանդներից	57,407	1,514	103,311	3,354
Այլ տոկոսային եկամուտ	-	(8,014)	-	-
	417,764	709,024	886,728	1,457,416

Ծանոթագրություն 2 «Տոկոսային և նմանատիպ ծախսեր»

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
Տոկոսային ծախսեր բանկերից ներգրաված միջոցներից	(56,800)	(109,910)	(110,311)	(244,112)
Այլ տոկոսային ծախսեր	-	(4,120)	(335)	(8,160)
	(56,800)	(114,030)	(110,646)	(252,272)

Ծանոթագրություն 3 «Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)»

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ (վնաս)	(280,908)	(23,973)	(143,369)	235,264
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ շահույթ (վնաս)	4,272	3,198	6,325	4,954
	(276,636)	(20,775)	(137,044)	240,218

Ծանոթագրություն 4 «Այլ եկամուտ»

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
Եկամուտներ ստացված տույժերից	27,815	16,339	47,499	30,322
Այլ եկամուտ	118	50	196	386
	27,933	16,389	47,695	30,708

Ծանոթագրություն 5 «Վարկերի և այլ փոխառություններից առաջացած վերադարձ (կորուստներ)»

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
Տրամադրված վարկերից	10,902	13,650	57,184	11,344
Դեբիտորական պարտքերից	-	-	-	-
	10,902	13,650	57,184	11,344

Ծանոթագրություն 6 «Ընդհանուր վարչական ծախսեր»

01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
-------------------	-------------------	-------------------	-------------------

	30/06/09	30/06/10	
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	(48,054)	(59,951)	(111,696)
Հատկացումներ սոցալ.ապահով.գծով	(4,529)	(5,951)	(8,326)
Շենքի վարձակալության գծով ծախսեր	(8,084)	(8,084)	(16,167)
Շենքի և այլ հիմն.միջոցների սպասարկման ծախսեր	(165)	(196)	(462)
Անվտանգության ապահովման ծախսեր	(894)	(894)	(1,788)
Աուդիտի և այլ խորհրդատվության ծախսեր	(1,800)	(2,622)	(3,600)
Ամորտիզացիոն ծախսեր	(3,482)	(3,775)	(6,776)
Այլ ծախսեր	(9,096)	(7,533)	(16,152)
	(76,104)	(89,006)	(164,967)
			(259,194)

Ծանոթագրություն 7 «Այլ ծախսեր»

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
Վճարված տույժեր և տուգանքներ	0	103		
Այլ ծախսեր	(4,434)	(7,899)	(9,106)	(13,306)
	(4,434)	(7,796)	(9,106)	(13,306)

Ծանոթագրություն 8 «Շահութահարկի գծով ծախս»

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09
Ընթացիկ շահութահարկի ծախս				
Ընթացիկ տարի	(275)	2,231	(275)	48,447
	(275)	2,231	(275)	48,447
Հետաձգված հարկի գծով ծախս				
Ժամանակավոր տարբերությունների ձևավորումը և փոփոխությունները	136,075	92,505	32,978	141,195
Ընդհանուր շահութահարկի ծախս	136,075	92,505	32,978	141,195

Խմբի շահութահարկի տոկոսադրույքը ընթացիկ տրավա համար կազմում է 20%

	01/04/10-30/06/10	01/04/09-30/06/09	01/01/10-30/06/10	01/01/09-30/06/09					
Շահույթ մինչև հարկումը	42,542	506,215	569,513	1,214,021					
Շահութահարկ	8,508	101,243	113,903	242,804	20%	20%	20%	20%	
Զնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտ)	127,292	(195,979)	(81,200)	(432,446)	299.2	%	38.7%	14.3%	35.6%
	135,800	(94,736)	32,703	(189,642)					

Ծանոթագրություն 9 «Բանկերում տեղաբաշխված միջոցներ»

	30/06/10	31/12/09
Ռեզիդենտ բանկում բանկային հաշիվներ	109,012	219,087
Ոչ ռեզիդենտ բանկում բանկային հաշիվներ և ստեղծված միջոցներ	67,235	82,168
Բանկում տեղաբաշխված ավանդներ	3,895,500	2,571,164
Կուտակված տոկոսներ	26,662	8,951
	4,098,409	2,881,370

Ծանոթագրություն 10 «Հաճախորդներին տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ»

	30/06/10	31/12/09
Չեռնարկատիրական վարկեր	7,873,830	8,160,146
Ընդհանուր ձեռնարկատիրական վարկեր	7,873,830	8,160,146
Ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	3,069,736	3,436,488
Սպառողական վարկեր	50,403	93,348
Մեքենայի վարկեր	172,547	228,030
Այլ վարկեր	161,456	477,455
Ընդհանուր ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	3,454,142	4,235,321
Ընդհանուր վարկեր	11,327,971	12,395,467
Վարկերի գծով պահուստ	(125,431)	(200,178)
Ընդհանուր զուտ վարկեր	11,202,540	12,195,289

Տրամադրված վարկերի պահուստների տեղաշարժը

	30/06/10	31/12/09
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում	200,178	95,495
Տարվա ընթացքում հատկացումը	(59,011)	222,118
Զուտ վերադարձը	(15,736)	(117,435)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	125,431	200,178

Ծանոթագրություն 11 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում»

	30/06/10	31/12/09
Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	121,505	
Կուտակված ամորտիզացիա	(795)	
	120,710	-

Ծանոթագրություն 12 «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Հոդ, շենք և գույք	Համակարգչային սարքավորում	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք					
Նախորդ տարվա վերջին տվյալները	11,618	24,368	39,942	9,257	85,185
Ավելացում	0	361	0	0	361
Օտարում	(291)	(1,597)		(2)	(1,890)
Ընթացիկ տարվա վերջի տվյալները	11,327	23,132	39,942	9,255	83,656
Մաշվածք					

Սկզբնական մնացորդ	4,284	18,237	16,273	3,397	42,191
Կուտակված ամորտիզացիա	784	1,767	2,830	599	5,980
Կուտակված արժեզրկում					0
Ճշգրտում	(100)	(1250)		(2)	(1,352)
Վերջնական մնացորդ	4,968	18,754	19,103	3,994	46,819
Չուտ հաշվեկշռային արժեք					
Նախորդ տարվա վերջ	7,334	6,131	23,669	5,860	42,994
Ընթացիկ տարվա վերջ	6,359	4,378	20,839	5,261	36,837
Շահագործումից դուրս ակտիվներ					
Հաշվեկշռային արժեք					
Նախորդ տարվա վերջին տվյալները	928	809	0	93	1830
Ավելացում	293	1942	0	0	2235
Օտարում	103	1937	0	0	2040
Շահագործումից դուրս հաշվեկշռային արժեք	1118	814		93	2025
Հաշվետու ժամանակահատվածի վերջին տվյալները	7,477	5,192	20,839	5,354	38,862

Ծանոթագրություն 13 «Ներդրումային գույք»

	30/06/10	31/12/09
Ներդրումային գույք	1,607,000	1,607,000
	1,607,000	1,607,000

Ծանոթագրություն 14 «Այլ ակտիվներ»

	30/06/10	31/12/09
Դեբիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ	28,987	33,987
Դեբիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ	9,102	4,934
Կանխավճարներ ռեզիդենտ մատակարարներին	33,130	80,100
Կանխավճարներ բյուջեի նկատմամբ	255,202	232,023
Բռնագանձված անշարժ գույք	364,326	240,995
Այլ ակտիվներ	61,711	61,903
	752,458	653,942

Ծանոթագրություն 15 «Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ»

	30/06/10	31/12/09
Ոչ ռեզիդենտ բանկից ներգրավված օվերդրաֆտ	11,813,980	11,943,632
Հաշվեզրված կոմիսսիոն գումար	0	
	11,813,980	11,943,632

Ծանոթագրություն 16 «Պարտավորություններ կառավարության նկատմամբ»

	30/06/10	31/12/09
--	----------	----------

Պարտավորություններ ԱԱՀ գծով	143	5
Պարտավորություններ սոց.ապահովագրության գծով	1,510	2,547
Պարտավորություններ այլ հարկերի գծով	2,977	
	<u>4,630</u>	<u>2,552</u>

Ծանոթագրություն 17 «Հետաձգված հարկային պարտավորություն»

Ժամանակավոր տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատկներով հաշվառվող գումարների միջև, առաջացնում են հետաձգված հարկային պարտավորություններ

	Ակտիվներ		Պարտավորություններ		Չուս	
	30/06/10	31/12/09	30/06/10	31/12/09	30/06/10	31/12/09
Տրամադրված վարկեր			(426,860)	(466,071)	(426,860)	(466,071)
Նյութական և ոչ նյութական ակտիվներ			(3,853)	(3,437)	(3,853)	(3,437)
Այլ ակտիվներ			(6,470)	(7,326)	(6,470)	(7,326)
Բանկերից ներգրավված օվերդրաֆտ			(0)	(6)	(0)	(6)
Այլ պարտավորություններ	1,846	3,354	(1,949)	(3,078)	(103)	276
Հարկային վնաս	53,019	59,319			53,019	59,319
	<u>54,866</u>	<u>62,673</u>	<u>(439,132)</u>	<u>(479,918)</u>	<u>(384,267)</u>	<u>(417,245)</u>

Տոկոսադրույքը, որը կիրառվել է հետաձգված հարկային պարտավորությունները հաշվարկելիս կազմել է 20%:

Ժամանակավոր տարբերությունների շարժ ընթացիկ ժամանակաշրջանի ընթացքում

	Մնացորդ ը 01/01/10	Եկամտի կազմում ճանաչվ ած	Մնացորդը 30/06/10
Տրամադրված վարկեր	(466,071)	39,211	(426,860)
Նյութական և ոչ նյութական ակտիվներ	(3,437)	(416)	(3,853)
Այլ ակտիվներ	(7,326)	856	(6,470)
Բանկերից ներգրավված օվերդրաֆտ	(6)	5	(0)
Այլ պարտավորություններ	276	(2,225)	(1,949)
Հարկային վնաս	59,319	(4,453)	54,866
	<u>(417,245)</u>	<u>32,978</u>	<u>(384,267)</u>

Ծանոթագրություն 18 «Այլ պարտավորություններ»

	30/06/10	31/12/09
Հիմնական աշխատողներին վճարվելիք գումարներ	6,178	9,569
Ապագա ժամանակաշրջանի եկամուտ	428	4,666
Արտաքին կրեդիտորական պարտքեր	7,884	4,540
Այլ պարտավորություններ	886	653
	<u>15,376</u>	<u>19,429</u>

Ծանոթագրություն 19 «Կանոնադրական կապիտալ»

«Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ-ն 2010 թվականի երկրորդ եռամսյակի վերջում կանոնադրական կապիտալը կազմել է 1,314,040 հազ. ՀՀ դրամ: Կանոնադրության համաձայն ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 1314040 հատ սովորական բաժնետոմսերից, որոնց անվանական արժեքը կազմում է 1000 ՀՀ դրամ:

Ծանոթագրություն 20 «Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերաբերյալ»

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների մասին ծանոթագրությունը կազմվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև մարման ամսաթիվը մնացած ժամանակաշրջանի մեթոդով:

Այս վերլուծությունում չեն ներառվում այն ոչ ֆինանսական ակտիվները, որոնք չունեն ժամկետայնություն:

Ակտիվներ	1 ամսից պակաս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	4,098,409				4,098,409
Հաճախորդներին տրված վարկեր	1,818,224	202,687	2,153,735	7,027,894	11,202,540
Այլ ակտիվներ	252,266	9,102	4,552		265,920
ԸՆԴԱՍԵՆԸ	6,168,899	211,789	2,158,287	7,027,894	15,566,869

Պարտավորություններ	1 ամսից պակաս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր			11,813,980		11,813,980
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	4,630				4,630
Այլ պարտավորություններ	15,376				15,376
ԸՆԴԱՍԵՆԸ	20,006		11,813,980		11,833,986

Ծանոթագրություն 21 «Արտարժույթային գանձյուղ»

Այս ծանոթագրությունում արտացոլվում են դրամային և արտարժույթային ակտիվների և պարտավորությունների գուտ դիրքերը:

	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանափակ փոխարկելի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ	2,890,346	14,930,245		17,820,591
Պարտավորություններ	404,021	11,814,233		12,218,254
Զուտ արտարժույթային դիրք	2,486,325	3,116,012	0	5,602,337

Ծանոթագրություն 22 «Տոկոսադրույքի ռիսկ»

Այս ծանոթագրությունում արտացոլվում են ակտիվների և պարտավորությունների միջին տոկոսադրույքները:

	մինչև 1 ամիս		1-3 ամիս		3 ամսից 1 տարի		1 տարուց ավելի	
	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի
Ներգրավված միջոցներ								
Դրամով								
Արտարժույթով					3.47%	1.80%		
Տեղաբաշխված միջոցներ								
Դրամով	22.48	21.74	22.42	22.42	22.35	21.34	20.73	17.29
Արտարժույթով	14.81	13.92	15.06	15.17	14.88	13.96	14.3	14.31

Ծանոթագրություն 23 «Ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների կենտրոնացում»

«Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ-ի 2010 թվականի երկրորդ եռամսյակում վարկեր է տրամադրել ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ իրավաբանական անձանց:

Ծանոթագրություն 24 «Կապակցված կողմեր»

«Նորվիկ » ՈւՎԿ ՓԲԸ-ն 2010 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում իր հետ կապակցված անձից ներգրավել է օվերդրաֆտ, որի հաշվեկշռային արժեքը 2010թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 11,813,980.00 հազ.դրամ:

Ծանոթագրություն 25 «Դուստր ընկերության ձեռքբերում»

2009 թվականի նոյեմբերի 30-ին Ընկերությունը ձեռք է բերել «Էկստվ» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերը: Այդ բաժնետոմսերի դիաց վճարել է 1,664,733.3 հազ. ՀՀ դրամ: Դուստր ընկերության ունեցել է հետևյալ ակտիվները և պարտավորությունները ձեռքբերման պահին

Ակտիվներ	ՀՀ հազ.դրամ
Ներդրումային գույք	1,607,000
Այլ ակտիվներ	58,593
Ընդհանուր ակտիվներ	1,665,593
Պարտավորություններ	
Այլ պարտավորություններ	316
Չուտ ակտիվներ	1,665,277

Չեռքերված գին

1,664,733

Ներդրումային գույքը պահվում է եկամտատ ստանալու նպատակով: Ներդրումային գույքը
Համախմբված Հաշվեկշռում արտացոլված է իրական արժեքով, որը հիմնված է անկախ գնահատող
կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա:
Դուստր ընկերության եկամուտները և ծախսերը, որոնք ստացվել են ձեռքբերումից հետո
համախմբվել «Նորվիկ, ՈւՎԿ ՓԲԸ-ի ֆինանսական արդյունքներին: